

Հանրային քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավների աջակցության դրամաշնորհի հայտ ներկայացնելու հրավեր

ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիրը (CASP), որն իրականացվում է Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան գրասենյակի կողմից, հայտարարում է դիմում-հայտ ներկայացնելու հրավեր՝ քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության աջակցության դրամաշնորհների համար, հայաստանում գրանցված ոչ կառավարական և շահույթ չհետապնդող, հասարակական կազմակերպություններից:

CASP-ը սկսել է իր գործունեությունը 2004թ. -ի սեպտեմբերից: CASP-ի նպատակն է հզորացնել հայաստանյան ոչ կառավարական, շահույթի նպատակ չհետապնդող հասարակական կազմակերպությունների շահերի պաշտպանության կարողությունները դասընթացների, դրամաշնորհների տրամադրման և կարողությունների զարգացմանն ուղղված այլ գործունեության միջոցով:

Հանրային քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավների աջակցության դրամաշնորհների նպատակն է աջակցել ոչ կառավարական և շահույթ չհետապնդող, հասարակական կազմակերպություններին իրականացնել հանրային քաղաքականության որոշակի դիրքորոշումների կամ ոլորտների վերլուծություն , հանրային քաղաքականության տարբեր ոլորտների, վերահսկողություն (մոնիտորինգ), շահերի պաշտպանության քարոզարշավների գործողությունների իրականացումը ուղղված են դիմորդ կազմակերպությունների առաքելությանն ու հիմնախնդիրների լուծմանը, նրանց ընթացիկ քարոզարշավների և ծրագրերի շրջանակներում շահերի պաշտպանության կոնկրետ նպատակների խթանմանը:

Ծրագրի առաջարկները կարող են ուղղված լինել/օժանդակել շահերի պաշտպանության շրջանի (ցիկլի) տարբեր մակարդակներին՝ ներառյալ խնդրի բացահայտում, շահերի պաշտպանության քարոզարշավի պլանավորում, քարոզարշավի կազմակերպում կամ հանրային քաղաքականության փոփոխության և վերահսկողության:

Հանրային քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության քարոզարշավների աջակցության դրամաշնորհները հնարավորություն կտան հայաստանյան ՀԿ-ներին իրականացնել հանրային քաղաքականության տարբեր ոլորտների վերլուծություն (գիտական հետազոտությունները չեն խրախուսվում: Խնդրում ենք ուշադրություն դարձնել քաղաքականության և գիտական հետազոտության միջև տարբերությունը), մշակել առաջարկությունների փաթեթներ կամ կազմակերպության դիրքորոշումը հիմնախնդրի վերաբերյալ՝ օժանդակելու կազմակերպության կողմից իրականացվող շահերի պաշտպանության քարոզարշավին: Դրամաշնորհները կաջակցեն կազմակերպություններին իրականացնել/կազմակերպել գործողություններ՝ ուղղված տարբեր շահառուների կողմից խնդիրների քննարկմանը և հասարակայնացմանը, ինչպես նաև դրանց վերաբերյալ միասնական լուծումներ գտնելու գործընթացին շահագրգիռ կողմերի ներգրավմանը: Այնպիսի գործողություններ, ինչպիսիք են հանրային քաղաքականության վերաբերյալ հասարակական քննարկումներ, խորհրդարանական/հասարակական լսումներ, հանրային քաղաքականությանն ուղղված կլոբ սեդաններ կամ բակային հանդիպումներ, պետք է իրականացվեն նոր կամ արդեն իսկ առկա քաղաքականության ոլորտում հետազոտության կամ վերլուծության հետ միասին՝ խթանելու/ներկայացնելու համար խնդրի վերաբերյալ Ձեր տեսակետը, և ներգրավվելու համար համախոհների լայն շրջանակ՝ որոշումների ընդունման գործընթացում:

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ ի հավելումն հանրային քաղաքականության վերլուծության/հետազոտության խրախուսվում է խնդրի հանրայնացումը և հրապարակայնացումը՝ նպատակ ունենալով օժանդակել կազմակերպության շահերի պաշտպանության քարոզարշավի գործողություններին:

Սույն դրամաշնորհի շրջանակներում CASP-ը նախատեսում է տրամադրել մինչև 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ յուրաքանչյուր դրամաշնորհի համար: Դիմորդ կազմակերպություններից պահանջվում է ապահովել առնվազն 20% ներդրում (կանխիկ կամ կազմակերպության ներդրում), ի հավելումն դռնոր կազմակերպությունից պահանջվող գումարի:

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության աջակցության դրամաշնորհների դիմում-հայտը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից՝

1) Տնտեսաբանություն

- ա) Դիմող կազմակերպության անվանումը և հասցեակցումը (եթե առկա է)
- բ) Ծրագրի անվանումը
- գ) Ծրագրի տևողությունը
- դ) Ծրագրի իրականացման վայրը
- ե) Կազմակերպության ղեկավարը (անուն, հեռախոսահամար, էլ. փոստ)
- զ) Ծրագրի ղեկավարը (անուն, հեռախոսահամար, էլ. փոստ)
- է) Դիմող կազմակերպության գործունեության հասցեն (քաղաք, փողոց, հեռախոս, ֆաքս, էլ. փոստ)
- ը) CASP-ից պահանջվող գումարը՝ հայկական դրամով*
- թ) Ծրագրին իրականացնող կազմակերպության ներդրումը (նվազագույնը 20%)՝ հայկական դրամով*
- ժ) Այլ ներդրում (եթե եռյա է)՝ հայկական դրամով*
- ի) Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ հայկական դրամով*

*Բյուջեն պետք է հաշվարկել միայն հայկական դրամով

2) Համառոտ նկարագիրը (կես էջ)

Այս մասում խնդրում ենք ներկայացնել ծրագրի համառոտ նկարագիրը՝ ներառյալ խնդրի բացահայտումը, առաջարկվող լուծումը, թիրախ խումբը, շահառուները, ծրագրի իրականացման վայրը և հիմնական գործողությունները:

Խորհուրդ է տրվում համառոտ նկարագիրը կազմել վերջում՝ համոզված լինելու համար, որ ընդգրկել էք բոլոր նշված կետերը:

3) Կազմակերպության մասին տեղեկություններ (կես էջ)

- ա) կազմակերպության առաքելությունը և նպատակները, ինչպես նշված է կազմակերպության կանոնադրությունում (կցեք նաև կանոնադրության այն էջերը, որտեղ թվարկված են նպատակները և առաքելությունը):
- բ) կազմակերպության նախկին փորձառությունը և ձեռքբերումները շահերի պաշտպանության բնագավառում (նշե՛ք դռնոր կազմակերպությունների անունները, պատասխանատու անձանց անունները և հեռախոսահամարները)

4) Ծրագրի առաջարկ (չորս էջից ոչ ավելի, առանց հավելվածների)

ա) Շահերի պաշտպանության երկարաժամկետ ռազմավարության նկարագրությունը՝ նկարագրեք այն շահերի պաշտպանության քարտզարշավը, որը Ձեր կազմակերպությունն իրականացնում է ներկայումս (կամ սկսում է իրականացնել): Նկարագրեք, թե ի՞նչ խնդիր կլուծի տվյալ քարտզարշավը, համապատասխանում է այն արդյոք Ձեր կազմակերպության նպատակներին, ովքե՞ր են շահառուները, ինչու՞ է կարևոր իրականացնել սույն ծրագիրը հենց այժմ, և ինչպե՞ս Ձեր քարտզարշավը կբարելավի շահառուների կյանքը: Համառոտ նկարագրեք, թե ի՞նչ եք արել Դուք, և այլոք այս խնդրի վերաբերյալ:

բ) Ծրագրի առաջարկի նկարագրությունը՝ Ընդհանուր շահերի պաշտպանության քարտզարշավի շրջանակներում նկարագրեք այն առաջարկված ծրագիրը, որի համար ուզում եք ստանալ քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության աջակցության դրամաշնորհ:

Խնդրում ենք ի նկատի ունենալ, որ խնդրի հրապարակայնությունը խրախուսվում է ի օժանդակություն հանրային քաղաքականության վերահսկման/վերլուծության/հետազոտության, սակայն վերջինս չի ֆինանսավորվի որպես ծրագրի միակ կոմպոնենտ: Ի հավելումն հանրային քաղաքականության ոլորտում հետազոտության/վերլուծության կամ արդեն իսկ առկա վերլուծության/հետազոտության, որը կկիրառվի Ձեր կողմից իրականացվող քարտզարշավի համար, խրախուսվում են ներգրավվածության հետևյալ ձևերը՝ շահառուների լայնածավալ մասնակցությունը քաղաքականության ստեղծման/փոփոխման գործընթացն ապահովելու համար՝

- **Քաղաքականության վերաբերյալ քննարկումներ**՝ այս քննարկումները պետք է վերաբերվեն քաղաքականության խնդիրների վերաբերյալ իրարամերժ կարծիքների շուրջ կառուցողական միջավայր ստեղծելուն, և կծառայեն տվյալ խնդրի վերաբերյալ քաղաքականությունը ձևավորողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների տեսակետները ձևակերպելու համար:
- **Քաղաքականությանն ուղղված կլոր սեղաններ**՝ այս կլոր սեղաններին կարող են մասնակցել տարբեր փորձագետներ և որոշում ընդունողներ, որոնք կներկայացնեն իրենց կարծիքները տվյալ խնդրի վերաբերյալ հետազոտության և քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների տեսքով՝ սահմանափակ ժամանակահատվածում և հիմնվելով հետազոտության կայուն տվյալների վրա:
- **Խորհրդարանական լսումներ**՝ այս պաշտոնական ֆորումները տեղի են ունենում Ազգային Ժողովում: Խորհրդարանական լսումներին մասնակցում են տվյալ ոլորտի փորձագետներ, որոնք մասնագիտական տեսակետներ են ներկայացնում որոշում կայացնողներին:
- **Բակայն հանդիպումներ, մարզային քննարկումներ**՝ այս ոչ ֆորմալ միջոցառումները կխրախուսեն քաղաքացիների մեծ խմբերի և հետքարքրված կողմերի համագործակցությունը՝ հնարավորություն տալով շփում ստեղծել կառավարությունում իրենց ներկայացուցիչների հետ՝ առանց Երևան գալու անհրաժեշտության:

զ) Կարիքի հիմնավորում՝ (նշեք հիմնավորված փաստարկներ՝ 4"բ" կետում նշված ծրագրին աջակցելու համար): Հիմնավորեք, թե ինչու՞ է Ձեր ներկայացրած հիմնախնդիրը ներկայումս ամենակարևորը հասարակության համար:

դ) Ծրագրից ակնկալվող արդյունքները՝ (նշեք որակական և քանակական արդյունքների ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ): Նկարագրե՛ք այն արդյունքների ցուցանիշները, որոնք նախատեսվում է չափել այս ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում, և բացատրեք, թե ինչպե՞ս դա կնպաստի ձեր կազմակերպության շահերի պաշտպանության ռազմավարության և/կամ որոշակի քարտզարշավի/նախաձեռնության իրականացմանը:

Հավելվածներ

Ա) Ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ (մանրամասն Գանտի աղյուսակ՝ նշելով քաղաքականության ոլորտում շահերի պաշտպանության աջակցության դրամաշնորհի ծրագրի գործողությունները/ փուլերը) ([բեռնել հայերեն տարբերակը](#), [բեռնել անգլերեն տարբերակը](#))

Բ) Բյուջե՝ ներկայացրեք մանրամասն բյուջե ([բեռնել հայերեն տարբերակը](#), [բեռնել անգլերեն տարբերակը](#))

Գ) Բյուջեի մանրամասն նկարագիր՝ (առավելագույնը 1 էջ) ([բեռնել հայերեն տարբերակը](#), [բեռնել անգլերեն տարբերակը](#))

Դ) Կազմակերպության կանոնադրության էջերի պատճեն, որտեղ նշված են կազմակերպության նպատակներն ու խնդիրները

Ե) Աշխատակազմի համառոտ կենսագրականները և աշխատանքային նկարագրերը

Խնդրում ենք ինկատի ունենալ, որ CASP-ը իր դրամաշնորհառուներից պահանջում է նվազագույնը 20% ներդրում (կանխիկ կամ կազմակերպության ներդրում), որը կտրամադրվի դիմում-հայտ ներկայացնողի կողմից սույն գործունեության համար:

Ընտրված կազմակերպությունների հետ կկնքվեն պայմանագրեր, որոնցում կնշվեն ծրագրի իրականացման ժամկետները և պայմանները, ինչպես նաև կողմերի պարտականությունները:

Ընտրության չափանիշներ

Ընտրող հանձնաժողովը կգնահատի բոլոր առաջարկները հիմնվելով հետևյալ չափանիշների վրա՝

1. Կազմակերպության մասին տեղեկություններ.....10%

1.1 Կազմակերպության համապատասխան փորձառությունը և աշխատակազմի կարողությունները10%

2. Ծրագրի նկարագիր.....70%

2.1 Շահերի պաշտպանության ռազմավարության նկարագիր (համապատասխանություն, արդիականություն, կարևորություն)20%

2.2 Խնդրի ձևակերպում և հիմնավորում (խնդրի կարևորություն).....20%

2.3 Քաղաքականության հետազոտության/վերլուծության մեթոդաբանություն, հանրայնացման ռազմավարությունը, համախոհներին երգրավածություն20%

2.4 Ծրագրից ակնկալվող արդյունքներ10%

3. Բյուջե (հիմնավորված ծախսերը).....10%

4. Գանտի աղյուսակ (հիմնավորված գործողություններ/ժամանակացույց).....10%

Ընդհանուր՝ 100%

Այն առաջարկները, որոնք չեն համապատասխանում առաջարկներ ներկայացնելու հայտում նշված պահանջներին, հաշվի չեն առնվի:

Սույն դրամաշնորհների իրականացման նախատեսված ժամկետն է ոչ շուտ, քան 2009 թ. նոյեմբերի 1-ը: Ծրագրի իրական սկիզբը կարող է նախատեսվածից ավելի ուշ լինել, եթե դիմորդ կազմակերպությունը ներկայացնի համապատասխան հիմնավորումներ:

Ծրագրի իրականացումը պետք է ավարտված լինի ամենաուշը մինչև 2010 թ.-ի մայիսի 1-ը:

Դիմում-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը 2009 թ., հոկտեմբերի 23-ն է, ժամը՝ 15:00-ն է: Ուշ ներկայացված դիմումները չեն ընդունվի:

Դիմում-հայտերը և դրանց հետ ներկայացված փաստաթղթերը ետ չեն վերադարձվի: ՄԻԱՅՆ ընտրված կազմակերպությունները կտեղեկացվեն:

Դիմում-հայտի ՏՊԱԳԻՐ ՕՐԻՆԱԿԸ պետք է ներկայացվի Քաունթերփարթ ինթերնեշնլի գրասենյակ հայերեն կամ անգլերեն լեզվով, ստորագրված և կնքված կազմակերպության իրավասու ներկայացուցչի կողմից: Տպագիր օրինակից բացի պետք է ներկայացվի նաև դիմում-հայտի էլեկտրոնային տարբերակը:

Հայերեն լեզվով դիմում-հայտ ներկայացրած կազմակերպություններից, ընտրվելու դեպքում, կպահանջվի ներկայացնել Ծրագրի համառոտ բովանդակության ու Բյուջեի անգլերեն տարբերակները:

Դիմում-հայտերն ընդունվում են հետևյալ հասցեով՝

Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչություն
Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագիր
ք. Երևան, Սարմենի փ. 35 (նախկին Ջրաշատ փ.,) ՀՀ
հեռ./ֆաքս (374 10) 589535, 524365

Սույն դիմում-հայտի վերաբերյալ հարցերով դիմել ՔՇՊԱԾ դրամաշնորհների ղեկավար Անի Մելիքայնին հետևյալ հեռախոսահամարներով՝ (374 10) 589535, 524365 կամ ani@counterpart.am

Ուշադրություն՝ Դիմում-հայտի ներկայացումը դեռևս չի նշանակում, որ Քաունթերփարթ ինթերնեշնլը անպատճառ կֆինանսավորի այն, ինչպես նաև չի եմթադրում, որ Քաունթերփարթ ինթերնեշնլը կհոգա հայտի նախապատրաստման և ներկայացման համար կատարված ծախսերը: